## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 04.05.2016թ.-ի N 38 - Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 14.06.2016թ. ժամը $12^{00}$

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 04.05.2016թ.-ի N 38 - Լ հրամանի հիման վրա «Տարոն» 10կվ ՕԳ-Ի Թիվ 127-145 հենարանների հատվածում ուղեգծի վերակառուցման աշխատանքների բաց ընթացակարգով ձեռքբերում, ծածկագիր՝ <<ԲԷՑ-ԲԸԱՇՁԲ-16/15>>

Մասնակցում էին հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | Սիմոն Իգիտբաշյան | - գլխավոր ճարտարագետ |
| Հանձնաժողովի անդամներ | Կորյուն Մկրտչյան | - գլխավոր տնօրենի տեղակալ |
| | Լևոն Ջավադյան | - գլխավոր տնօրենի խորհրդական |
| | Միշա Բաղրամյան | - իրավապայմանագրային բաժնի պետ |
| | Վահե Մարտիրոսյան | - ֆինանսատնտեսական բաժնի պետ |
| | Լևոն Ադամյան | - գլխավոր ճարտարագետի տեղակալ |
| Քարտուղար | Ռոմեն Ալբերտյան | - գնումների համակարգող |

### I. Հայտերի բացման մասին

---

(Ս. Իգիտբաշյան)

1. Գնահատող հանձնաժողովը արձանագրեց.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնային առաջարկներ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

- «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն ՝ 14.06.2016թ, ժամը 10:50-ին, իրավաբանական հասցե՝ ք. Երևան Այգեձորի 1-ին նրբ. 22 շ. 53բն., հեռ 093 000 690
- «Ապարան ԷՅՇ» ԲԲԸ-ն՝ 14.06.2016թ., ժամը 10:58-ին, իրավաբանական հասցե՝ Արագածոտնի մ. գ. Քուչակ , Նաիրյան 139շ.14բն., հեռ. 0252 2 55 30
- «ՎահրադյանՇին» ՍՊԸ-ն՝ 14.06.2016թ., ժամը 11:25-ին , իրավաբանական հասցե՝ Լոռի մարզ, ք. Ստեփանավան , Չարենցի 175, հեռ.099 12 28 12
- «Աննա 80» ՍՊԸ-ն՝ 14.06 .2016թ., ժամը 11:10-ին , իրավաբանական հասցե՝ Լոռի մարզ, ք. Վանաձոր Դ. Դեմիրճյան 20/23 , հեռ.091 43 78 67
- «Գախէլշին» ՍՊԸ-ն՝ 14.06 .2016թ., ժամը 10:30-ին , իրավաբանական հասցե՝ Վայոց Ձորի մ. Վայք Շահումյան 14, հեռ.077 70 34 30
- «Արտաշատի ԷՅՇ» ՍՊԸ-ն՝ 14.06 .2016թ., ժամը 12:00-ին , իրավաբանական հասցե՝ Արարատի մ. Գ. Ոստան, հեռ.091 40 53 22

2. Ընթացակարգի հրավերով սահմանված ծրարների կազմման և ներկայացման պահանջներին համապատասխանում են մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը:

2.1 Մասնակիցների ծրարներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.3 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

2.4 Մասնակիցների գնային առաջարկներն են .

ՀՀ դրամ

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Գնային առաջարկ /առանց ԱՀՀ/ |
|---|---|---|
| 1 | <<Աննա 80 >> ՍՊԸ | 11440000 |
| 2 | <<Վահրադյանշին>> ՍՊԸ | 21875880 |
| 3 | <<Դավիթ Էներջի>> ՍՊԸ | 22533000 |
| 4 | <<Գախէլշին>> ՍՊԸ | 22916667 |
| 5 | <<ԱպարանԷՑԾ>> ԲԲԸ | 24416410 |
| 6 | <<ԱրտաշատԷՑԾ>> ՍՊԸ | 28459449.16 |

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներ. ՀՀ դրամ

| 1-ին տեղ | Առաջարկած գին | 2-րդ տեղ | Առաջարկած գին | 3-րդ տեղ | Առաջարկած գին |
|---|---|---|---|---|---|
| «Աննա 80 » ՍՊԸ | 11440000 | «Վահրադյանշին» ՍՊԸ | 21875880 | «Դավիթ Էներջի» ՍՊԸ | 22533000 |

բ/Ծանուցել «Աննա 80» ԱՊԸ-ին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

գ/ Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն առաջին երկու նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սյուն հրավերի 2.3 «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

դ/ Ծանուցել «Աննա 80» ԱՊԸ-ին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել փաստաթղթային հիմնավորում, քանի որ մասնակցի գնային առաջարկը ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

ե/ Հաջորդ նիստը գումարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակացությունը ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

Արմոն Իգիտբաշյան

Միշա Բաղրամյան

Գորյուն Մկրտչյան

Վահե Մարտիրոսյան

Լևոն Ջավադյան

Լևոն Ադամյան

Ռոմեո Ալբերտյան